ԱՄՓՈՓԻՉ ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի III գումարման IV նստաշրջանի արդյունքների մասին
(13.09.04թ. - 08.12.04թ.)

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի երրորդ գումարման չորրորդ նստաշրջանի ընթացքում գումարվել է 7 եռօրյա նիստ: Նստաշրջանից հետո՝ ՀՀ կառավարության նախաձեռնությամբ դեկտեմբերի 13-ին և 24-ին գումարվել են նաև 2 արտահերթ նստաշրջան:

Նստաշրջանի սկզբում հաստատված օրակարգում ընդգրկված էին 74 հարց, որը հետագայում լրացվեց ևս 49-ով: Նստաշրջանի օրակարգի 123 հարցերից 81-ը ՀՀ կառավարության օրենսդրական նախաձեռնություններ էին, 33-ը՝ Ազգային ժողովի պատգամավորներինը, 1-ը՝ ՀՀ կառավարության և Ազգային ժողովի պատգամավորների համատեղ նախագծեր, իսկ 8-ը ՀՀ օրենքներով նախատեսված պարտադիր քննարկվող հարցեր, որոնցից 1-ը՝ ՀՀ Նախագահի առարկություններով և առաջարկություններով վերադարձված «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքն էր:

ՀՀ կառավարության 81 օրենքների նախագծերից 24-ը Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ անհետաձգելի համարված օրինագծեր էին:

Նստաշրջանի ընթացքում 115 օրենքների նախագծերից քննարկվել են 74-ը, որոնցից 17-ը ընդունվել են երրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ (14-ը կառավարության, 2-ը՝ պատգամավորների, իսկ 1-ը ՀՀ կառավարության և Ազգային ժողովի պատգամավորների համատեղ նախագիծ), 22-ը՝ երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ (18-ը կառավարության, 4-ը՝ ԱԺ պատգամավորների), իսկ 1-ը «Պետական գույքի մասնավորեցման 2001-2003 թվականների ծրագրի կատարման 2003 թվականի տարեկան հաշվետվության մասին» ՀՀ օրենքը, համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի՝ I ընթերցմամբ և ամբողջությամբ, 9-ը՝ երկրորդ ընթերցմամբ (8-ը՝ ՀՀ կառավարության; 1-ը՝ ԱԺ-ի պատգամավորների) և 21-ը՝ առաջին ընթերցմամբ (17-ը կառավարության, 4-ը՝ ԱԺ պատգամավորների), կառավարության օրենսդրական նախաձեռնությամբ ներկայացված 3 օրենքների նախագծերի փաթեթների ընդունումը հերթական ընթերցմամբ մերժվել է Ազգային ժողովի կողմից: Դրանք են՝ *

1. «Հսկիչ - դրամարկղային մեքենաների կիրառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը,

---

* Նախագծերի փաթեթները հետագայում լրամշակվեցին և դարձյալ ներկայացվեցին ՀՀ ԱԺ-ի քննարկմանը, իսկ վերջին նախագծերի փաթեթի ընդունումը հերթական ընթերցմամբ ԱԺ-ը մերժել է 2 անգամ:

2. «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին», «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին», «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Գրավատների և գրավատնային գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին», «Ապահովագրության մասին» ՀՀ օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին», «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Վիճակախաղերի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին», «Շահումով խաղերի և խաղատների մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին», «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը,

3. «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը:

Հետ է կանչվել նաև նստաշրջանի օրակարգում ընդգրկված սակայն նստաշրջանի ընթացքում չքննարկված ՀՀ կառավարության 1 նախագիծ՝ քննարկման նպատակահարմարությունը վերանալու նպատակով: Այն է՝ «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

Ամբողջությամբ ընդունված 40 օրենքներից 33-ը ՀՀ կառավարության նախաձեռնություններ էին, 6-ը՝ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներինը, իսկ 1-ը՝ «ՀՀ ընտանեկան օրենսգիրք» ՀՀ օրենքը՝ ՀՀ կառավարության և ԱԺ-ի պատգամավորների համատեղ նախաձեռնությունն էր:

40 օրենքներից 17-ը մայր օրենքներ էին (14-ը՝ ՀՀ կառավարության, 2-ը՝ ԱԺ պատգամավորների, 1-ը՝ ՀՀ կառավարության և ԱԺ-ի պատգամավորների համատեղ ներկայացրած նախագիծ), 22-ը՝ փոփոխություններ և լրացումներ արդեն գործող օրենքներում (18-ը՝ ՀՀ կառավարության, 4-ը՝ ԱԺ-ի պատգամավորների), իսկ 1-ը՝ «Պետական գույքի մասնավորեցման 2001-2003 թվականների ծրագրի կատարման 2003 թվականի տարեկան հաշվետվության մասին» ՀՀ օրենքը:

Ամբողջությամբ ընդունված 40 օրենքներից 24-ը ունեն ֆինանսատնտեսական ուղղվածություն, 13-ը՝ սոցիալական, բնապահպանական և առողջապահական նշանակություն, 11-ը՝ իրավական դաշտից են, 2-ը վերաբերում են կրթության ոլորտին, 2-ը՝ երկրի պաշտպանությանը և ազգային անվտանգությանը:

Ամբողջությամբ ընդունվեցին նախորդ նստաշրջանի ընթացքում քննարկված, սակայն անավարտ մնացած 10 օրենքների նախագծեր (7-ը ՀՀ կառավարության, 2-ը ԱԺ-ի պատգամավորների, 1-ը ՀՀ կառավարության և ԱԺ-ի պատգամավորների համատեղ ներկայացրած նախագիծ):

Նախորդ նստաշրջանի ընթացքում I կամ II ընթերցմամբ ընդունվել և աշնանային նստաշրջան էին տեղափոխվել 18 նախագծեր, որոնցից 8-ը ԱԺ-ի III գումարման IV նստաշրջանի ընթացքում այդպես էլ չքննարկվեցին՝ ամբողջությամբ ընդունելու համար:

Ազգային ժողովը լսեց՝

- ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005 թվականի տարեկան գործունեության ծրագրի հաղորդումը,

- ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովի 2005 թվականի տարեկան գործունեության ծրագրի հաղորդումը,

- «Եվրոպական կառույցներին ինտեգրման հարցերով ՀՀ Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովի գործունեության ժամկետը երկարաձգելու մասին» հաղորդումը,

- Օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների, վարկերի, դրամաշնորհների և մարդասիրական օգնությունների օգտագործման արդյունավետությունն ուսումնասիրող ՀՀ Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովի միջանկյալ հաղորդումը,

- - Ազգային ժողովի և Ազգային ժողովի նախագահի գործունեության մասին տարեկան հաղորդումը:

«Հայաստանի Հանրապետության 2005 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի քննարկումը մնաց անավարտ, որը շարունակվեց և ամբողջությամբ ընդունվեց դեկտեմբերի 24-ին ՀՀ կառավարության նախաձեռնությամբ գումարված արտահերթ նստաշրջանի ընթացքում:

«Հայաստանի Հանրապետության արժեթղթերի հանձնաժողովի 2005 թվականի գործունեության պետական նպատակային տարեկան ծրագիրը հաստատելու մասին» և «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վերահսկիչ պալատի 2005 թվականի գործունեության ծրագրի մասին» նախագծերը քննարկվեցին, սակայն քվեարկություն չկազմակերպվեց:

Ընդունված պատգամավորական նախագծերի մեջ առավել մեծ թիվ են կազմում ՀՀ Ազգային ժողովում կոալիցիան ներկայացնող պատգամավորների (Գ. Սահակյան, Լ. Մկրտչյան, Ս. Բալասանյան) հեղինակած նախագծերը:

Ընդունված նախագծերից առանձնապես կարևոր են. «ՀՀ աշխատանքային օրենսգիրք», «Ընտանեկան օրենսգիրք», «Քաղաքացիական կացության ակտերի մասին», «Առևտրի և ծառայությունների մասին», «Արժութային կարգավորման և արժութային վերա-

հսկողության մասին», «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցման երաշխավորման մասին», «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին», «Թափոնների մասին», «Գնումների մասին», «Արտոնագրերի մասին», «Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին», «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին», «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին», «Համայնքային ծառայության մասին», «Փոստային կապի մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», «Էլեկտրաէներգետիկական համակարգում և էլեկտրասպառման ոլորտում տեխնիկական վերահսկողության մասին» ՀՀ օրենքները:

Նստաշրջանի ընթացքում վավերացվեցին 35 միջազգային պայմանագրեր, որոնցից 4-ը տնտեսության բնագավառում համագործակցության մասին է, 18-ը՝ իրավական բնագավառում համագործակցության, 3-ը գիտության, կրթության, 10-ը՝ առողջապահության և բնապահպանության բնագավառում:

Նստաշրջանի ընթացքում 7 պատգամավոր գրավոր հարցերով դիմել է ՀՀ կառավարությանը: 84 պատգամավոր հանդես է եկել հայտարարությամբ, որոնցից 24-ը վերաբերել են կառավարության գործունեությանը: